

**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/102**

ք. Երևան

«31» հուլիսի 2020 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՍԱՍՈՒՆԱՍԱՐ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Հայրապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքները** (այսուհետև՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են << օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **համաձայն հավելված 2-ի:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:



3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուրու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից **հաշված 365 օրացուցային օր**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **4681278 (չորս միլիոն վեց հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր յոթանասունուրթ) ՀՀ դրամ, որից 780213 (յոթ հարյուր ութսուն հազար երկու հարյուր տասերեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի **0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի **15 (տասնհինգ)** տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է \_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևանի քաղաքապետարանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պատվիրատու

Երևանի քաղաքապետարան  
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1  
Կենտրոնական գանձապետարան  
Հ/Հ 900032000375  
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան



### Կապալառու

«ՍԱՍՈՒՆԱՍԱՐ» ՍՊԸ  
Երևանի . Ազատության նրբ  
4-րդ շենք. 75բնակարան  
Արարատքանկ ՓԲԸ  
N 1510022963830100  
ՀՎՀՀ 01516603

Ա. Հայրապետյան  
ԿՈՒԴ 01516603

(ստորագրություն)



Հավելված թիվ 1  
 «31» հուլիսի 2020 թ. կնքված  
 կնքված աշխատանքների կատարման  
 թիվ << ԵԲ-ԲՄԱՇՁԲ-20/102>> գնման պայմանագրի

**Ծավալաթերթ-Նախահաշիվ  
 Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի վթարային պատշգամբների  
 վերանորոգման աշխատանքները**

NN	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ դրամ/	Ընդամենը /հազ դրամ/
1	2	3	4	7	8
	<b>1. Գայի պողոտա Հ 7 շենք բն. 42</b>				
	<b>Քանդման աշխատանքներ</b>				
1	Խեցեսալե հատակի քանդում	մ <sup>2</sup>	2.790	0.345	0.96
2	Բետոնե հարթաշերտի քանդում 50մմ հաստությամբ /ջրամեկուսիչ շերտով/	մ <sup>3</sup>	0.140	13.139	1.83
3	Մետաղական բազրիքների ապամոնտաժում /հետագա օգտագործումով/	զմ	4.900	0.371	1.82
4	Խոռոչների բացում	մ <sup>3</sup>	0.100	9.850	0.98
5	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.588	2.806	1.65

Ընդամենը	0.21	%		7.25	
<b>Վերանորոգման աշխատանքներ</b>					
6	N16 մետաղական շվեյլերների 50x50x5մմ մետաղական անկյունակների տեղադրում	տն	0.083	62.118	5.13
7	N16 շվեյլերի արժեքը	գմ	5.600	6.235	34.91
8	50x50x5մմ մետաղական անկյունակի արժեքը	գմ	0.800	1.507	1.21
9	Միաձույլ ե/բ բարձկային ծածկի սալի վերականգնում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.210	61.305	12.87
10	Ամրանի արժեքը $\Phi$ 12 A500c դասի	տն	0.044	333.893	14.69
11	Գոյություն ունեցող բազրիքների տեղադրում, նոր փայտե հղկված և լաքապատված բռնաձողերով	գմ	4.900	4.562	22.35
12	Ճաղաշարի 2 շերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	5.200	0.954	4.96
13	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ <sup>2</sup>	2.790	0.945	2.64
14	Կերամիկ սալերից հատակի պատրաստում	մ <sup>2</sup>	2.790	4.856	13.55
15	Պատշգամբի ց/ավազե սվաղ ամրանային ցանցի վրա	մ <sup>2</sup>	4.500	1.720	7.74
16	Ամրանային ցանցի տեղադրում $\Phi$ 4 Bp-1	տն	0.060	452.962	27.18
17	Պատշգամբի ճակատային ներկում, մաձկապատումով	մ <sup>2</sup>	4.500	0.668	3.00

18	Ավտոամբարձիչի /BЫШКА/ շահագործում	ժամ	12.000	3.960	47.52
	<b>Ընդամենը</b>	<b>5.63</b>	<b>%</b>		<b>197.76</b>
	<b>2. Գայի պողոտա Հ 7/1 շենք բն. 8</b>				
	<b>Քանդման աշխատանքներ</b>				
19	Խեցեսալե հատակի քանդում	մ <sup>2</sup>	2.790	0.345	0.96
20	Բետոնե հարթաշերտի քանդում 50մմ հաստությամբ /ջրամեկուսիչ շերտով/	մ <sup>3</sup>	0.140	13.139	1.83
21	Մետաղական բազրիքների ապամոնտաժում /հետագա օգտագործումով/	գմ	4.900	0.371	1.82
22	Խոռոչների բացում	մ <sup>3</sup>	0.100	9.850	0.98
23	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.588	2.806	1.65
	<b>Ընդամենը</b>	<b>0.21</b>	<b>%</b>		<b>7.25</b>
	<b>Վերանորոգման աշխատանքներ</b>				
24	N16 մետաղական շվեյլերների 50x50x5մմ մետաղական անկյունակներին տեղադրում	տն	0.083	62.118	5.13
25	N16 շվեյլերի արժեքը	գմ	5.600	6.235	34.91

26	50x50x5մմ մետաղական անկյունակի արժեքը	զմ	0.800	1.507	1.21
27	Միաձույլ է/բ բարձկային ծածկի սալի վերականգնում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.210	61.305	12.87
28	Ամրանի արժեքը $\Phi$ 12 A500c դասի	տն	0.044	333.893	14.69
29	Գոյություն ունեցող բազրիքների տեղադրում, նոր փայտե հղկված և լաքապատված բռնածողերով	զմ	4.900	4.562	22.35
30	Ճաղաշարի 2 շերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	5.200	0.954	4.96
31	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ <sup>2</sup>	2.790	0.945	2.64
32	Կերամիկ սալերից հատակի պատրաստում	մ <sup>2</sup>	2.790	4.856	13.55
33	Պատշգամբի ց/ավազե սվաղ ամրանային ցանցի վրա	մ <sup>2</sup>	4.500	1.720	7.74
34	Ամրանային ցանցի տեղադրում $\Phi$ 4 Bp-1	տն	0.060	452.962	27.18
35	Պատշգամբի ճակատային ներկում, մածկապատումով	մ <sup>2</sup>	4.500	0.668	3.00
36	Ավտոամբարձիչի /BBIWKA/ շահագործում	ժամ	12.000	3.960	47.52
					197.76
	<b>Ընդամենը</b>	<b>5.63</b>	<b>%</b>		
	<b>3. Գալի պողոտա Հ 7/1 շենք բն. 6</b>				

<b>Քանդման աշխատանքներ</b>					
37	Խեցեսալե հատակի քանդում	մ <sup>2</sup>	2.790	0.345	0.96
38	Բետոնե հարթաշերտի քանդում 50մմ հաստությամբ /ջրամեկուսիչ շերտով/	մ <sup>3</sup>	0.140	13.139	1.83
39	Մետաղական բազրիքների ապամոնտաժում /հետագա օգտագործումով/	գմ	4.900	0.371	1.82
40	Խոռոչների բացում	մ <sup>3</sup>	0.100	9.850	0.98
41	Շին աղբի բարձում ա/հինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.588	2.806	1.65
	<b>Ընդամենը</b>	<b>0.21</b>	<b>%</b>		<b>7.25</b>
<b>Վերանորոգման աշխատանքներ</b>					
42	N16 մետաղական շվեյլերների 50x50x5մմ մետաղական անկյունակների տեղադրում	տն	0.083	62.118	5.13
43	N16 շվեյլերի արժեքը	գմ	5.600	6.235	34.91
44	50x50x5մմ մետաղական անկյունակի արժեքը	գմ	0.800	1.507	1.21
45	Միաձույլ ե/բ բարձկային ծածկի սալի վերականգնում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.210	61.305	12.87
46	Ամրանի արժեքը Φ12 A500c դասի	տն	0.044	333.893	14.69
47	Գոյություն ունեցող բազրիքների տեղադրում, նոր փայտե հղկված և լաքապատված բռնաձողերով	գմ	4.900	4.562	22.35

48	Ճաղաշարի 2 շերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	5.200	0.954	4.96
49	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ <sup>2</sup>	2.790	0.945	2.64
50	Կերամիկ սալերից հատակի պատրաստում	մ <sup>2</sup>	2.790	4.856	13.55
51	Պատշգամբի ց/ավազե սվաղ ամրանային ցանցի վրա	մ <sup>2</sup>	4.500	1.720	7.74
52	Ամրանային ցանցի տեղադրում Ф4 Вр-1	տն	0.060	452.962	27.18
53	Պատշգամբի ճակատային ներկում, մածկապատումով	մ <sup>2</sup>	4.500	0.668	3.00
54	Ավտոամբարձիչի /ВЫШКА/ շահագործում	ժամ	12.000	3.960	47.52
	<b>Ընդամենը</b>	<b>5.63</b>	<b>%</b>		<b>197.76</b>
	<b>Թորավենցի փողոց Հ 15 շենք բն. 14</b>				
	<b>Քանդման աշխատանքներ</b>				
55	Խեցեսալե հատակի քանդում	մ <sup>2</sup>	2.250	0.345	0.78
56	Բետոնե հարթաշերտի քանդում 50մմ հաստությամբ /ջրամեկուսիչ շերտով/	մ <sup>3</sup>	0.113	13.139	1.48
57	Մետաղական բազրիքների ապամոնտաժում /հետագա օգտագործումով/	զմ	4.300	0.371	1.59

58	Խոռոչների բացում	մ <sup>3</sup>	0.100	9.850	0.98
59	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.517	2.806	1.45
	<b>Ընդամենը</b>	<b>0.18</b>	<b>%</b>		<b>6.28</b>
<b>Վերանորոգման աշխատանքներ</b>					
60	N16 մետաղական շվեյլերների 50x50x5մմ մետաղական անկյունակների տեղադրում	տն	0.074	62.118	4.60
61	N16 շվեյլերի արժեքը	գմ	5.000	6.235	31.17
62	50x50x5մմ մետաղական անկյունակի արժեքը	գմ	0.800	1.507	1.21
63	Միաձույլ ե/բ բարձկային ծածկի սալի վերականգնում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.290	61.305	17.78
64	Ամրանի արժեքը Φ12 A500c դասի	տն	0.033	333.893	11.02
65	Գոյություն ունեցող բազրիքների տեղադրում, նոր փայտե հղկված և լաքապատված բռնածողերով	գմ	4.300	4.562	19.62
66	Ճաղաշարի 2 շերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	4.000	0.954	3.82
67	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ <sup>2</sup>	2.250	0.945	2.13
68	Կերամիկ սալերից հատակի պատրաստում	մ <sup>2</sup>	2.250	4.856	10.92

69	Պատշգամբի ց/ավազե սվաղ ամրանային ցանցի վրա	մ <sup>2</sup>	3.130	1.720	5.39
70	Ամրանային ցանցի տեղադրում Փ4 Bp-1	տն	0.043	452.962	19.48
71	Պատշգամբի ճակատային ներկում, մածկապատումով	մ <sup>2</sup>	3.130	0.668	2.09
72	Ավտոամբարձիչի /BBIWKA/ շահագործում	ժամ	12.000	3.960	47.52
	<b>Ընդամենը</b>	<b>5.03</b>	<b>%</b>		<b>176.73</b>
<b>5. Թոթավենցի փողոց Հ 15 շենք բն. 11</b>					
<b>Քանդման աշխատանքներ</b>					
73	Խեցեսալե հատակի քանդում	մ <sup>2</sup>	2.250	0.345	0.78
74	Բետոնե հարթաշերտի քանդում 50մմ հաստությամբ /ջրամեկուսիչ շերտով/	մ <sup>3</sup>	0.113	13.139	1.48
75	Մետաղական բազրիքների ապամոնտաժում /հետագա օգտագործումով/	գմ	4.300	0.371	1.59
76	Խոռոչների բացում	մ <sup>3</sup>	0.100	9.850	0.98
77	Շին աղբի բարձում ա/հինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.517	2.806	1.45
	<b>Ընդամենը</b>	<b>0.18</b>	<b>%</b>		<b>6.28</b>
<b>Վերանորոգման աշխատանքներ</b>					

78	N16 մետաղական շվեյլերների 50x50x5մմ մետաղական անկյունակների տեղադրում	տն	0.074	62.118	4.60
79	N16 շվեյլերի արժեքը	գմ	5.000	6.235	31.17
80	50x50x5մմ մետաղական անկյունակի արժեքը	գմ	0.800	1.507	1.21
81	Միաձույլ ե/բ բարձկային ծածկի սալի վերականգնում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.290	61.305	17.78
82	Ամրանի արժեքը $\Phi$ 12 A500c դասի	տն	0.033	333.893	11.02
83	Գոյություն ունեցող բազրիքների տեղադրում, նոր փայտե հղկված և լաքապատված բռնաձողերով	գմ	4.300	4.562	19.62
84	Ճաղաշարի 2 շերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	4.000	0.954	3.82
85	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ <sup>2</sup>	2.250	0.945	2.13
86	Կերամիկ սալերից հատակի պատրաստում	մ <sup>2</sup>	2.250	4.856	10.92
87	Պատշգամբի ց/ավազե սվաղ ամրանային ցանցի վրա	մ <sup>2</sup>	3.130	1.720	5.39
88	Ամրանային ցանցի տեղադրում $\Phi$ 4 Bp-1	տն	0.043	452.962	19.48
89	Պատշգամբի ճակատային ներկում, մածկապատումով	մ <sup>2</sup>	3.150	0.668	2.10
90	Ավտոամբարձիչի /BBIՎԱԿԱ/ շահագործում	ժամ	12.000	3.960	47.52

	Ընդամենը	#REF!	%		176.75
	6. Գայի պողոտա Հ 25 շենք բն. 36				
	Քանդման աշխատանքներ				
91	Խեցեսալե հատակի քանդում	մ <sup>2</sup>	2.790	0.345	0.96
92	Բետոնե հարթաշերտի քանդում 50մմ հաստությամբ /ջրամեկուսիչ շերտով/	մ <sup>3</sup>	0.140	13.139	1.83
93	Մետաղական բազրիքների ապամոնտաժում /հետագա օգտագործումով/	զմ	4.900	0.371	1.82
94	Խոռոչների բացում	մ <sup>3</sup>	0.100	9.850	0.98
95	Շին աղբի բարձում ա/հինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.588	2.806	1.65
	Ընդամենը	#REF!	%		7.25
	Վերանորոգման աշխատանքներ				
96	N16 մետաղական շվեյլերների 50x50x5մմ մետաղական անկյունակների տեղադրում	տն	0.083	62.118	5.13
97	N16 շվեյլերի արժեքը	զմ	5.600	6.235	34.91
98	50x50x5մմ մետաղական անկյունակի արժեքը	զմ	0.800	1.507	1.21
99	Միաձույլ ե/բ բարձկային ծածկի սալի վերականգնում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.210	61.305	12.87
100	Ամրանի արժեքը Φ12 A500c դասի	տն	0.044	333.893	14.69

101	Գոյություն ունեցող բազրիքների տեղադրում, նոր փայտե հղկված և լաքապատված բռնածողերով	զմ	4.900	4.562	22.35
102	Ճաղաշարի 2 շերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	5.200	0.954	4.96
103	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ <sup>2</sup>	2.790	0.945	2.64
104	Կերամիկ սալերից հատակի պատրաստում	մ <sup>2</sup>	2.790	4.856	13.55
105	Պատշգամբի ց/ավազե սվաղ ամրանային ցանցի վրա	մ <sup>2</sup>	4.500	1.720	7.74
106	Ամրանային ցանցի տեղադրում Փ4 Bp-1	տն	0.060	452.962	27.18
107	Պատշգամբի ճակատային ներկում, մածկապատումով	մ <sup>2</sup>	4.500	0.668	3.00
108	Ավտոամբարձիչի /BBIՍKA/ շահագործում	ժամ	12.000	3.960	47.52
	<b>Ընդամենը</b>	<b>5.63</b>	<b>%</b>		<b>197.76</b>
	<b>7. Թորավենցի փողոց Հ 15 շենք բն. 5</b>				
	<b>Քանդման աշխատանքներ</b>				
109	Խեցեսալե հատակի քանդում	մ <sup>2</sup>	2.250	0.345	0.78
110	Բետոնե հարթաշերտի քանդում 50մմ հաստությամբ /ջրամեկուսիչ շերտով/	մ <sup>3</sup>	0.113	13.139	1.48

111	Մետաղական բազրիքների ապամոնտաժում /հետագա օգտագործումով/	գմ	4.300	0.371	1.59
112	Խոռոչների բացում	մ <sup>3</sup>	0.100	9.850	0.98
113	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.517	2.806	1.45
	<b>Ընդամենը</b>	<b>0.18</b>	<b>%</b>		<b>6.28</b>
	<b>Վերանորոգման աշխատանքներ</b>				
114	N16 մետաղական շվեյլերների 50x50x5մմ մետաղական անկյունակների տեղադրում	տն	0.074	62.118	4.60
115	N16 շվեյլերի արժեքը	գմ	5.000	6.235	31.17
116	50x50x5մմ մետաղական անկյունակի արժեքը	գմ	0.800	1.507	1.21
117	Միաձույլ ե/բ բարձկային ծածկի սալի վերականգնում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.290	61.305	17.78
118	Ամրանի արժեքը Φ12 A500c դասի	տն	0.033	333.893	11.02
119	Գոյություն ունեցող բազրիքների տեղադրում, նոր փայտե հղկված և լաքապատված բռնածողերով	գմ	4.300	4.562	19.62
120	Ճաղաշարի 2 շերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	4.000	0.954	3.82
121	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ <sup>2</sup>	2.250	0.945	2.13
122	Կերամիկ սալերից հատակի պատրաստում	մ <sup>2</sup>	2.250	4.856	10.92

123	Պատշգամբի ց/ավազե սվաղ ամրանային ցանցի վրա	մ <sup>2</sup>	3.150	1.720	5.42
124	Ամրանային ցանցի տեղադրում Փ4 Եթ-1	տն	0.043	452.962	19.48
125	Պատշգամբի ճակատային ներկում, մածկապատումով	մ <sup>2</sup>	3.150	0.668	2.10
126	Ավտոամբարձիչի /ԵՆԻՍԿԱ/ շահագործում	ժամ	12.000	3.960	47.52
	<b>Ընդամենը</b>	<b>5.03</b>	<b>%</b>		<b>176.78</b>
	<b>8.Թորավենցի փողոց Հ 11/1 շենք բն. 27</b>				
	<b>Քանդման աշխատանքներ</b>				
127	Խեցեսալե հատակի քանդում	մ <sup>2</sup>	2.250	0.345	0.78
128	Բետոնե հարթաշերտի քանդում 50մմ հաստությամբ /ջրամեկուսիչ շերտով/	մ <sup>3</sup>	0.113	13.139	1.48
129	Մետաղական բազրիքների ապամոնտաժում /հետագա օգտագործումով/	գմ	4.300	0.371	1.59
130	Խոռոչների բացում	մ <sup>3</sup>	0.100	9.850	0.98
131	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.517	2.806	1.45
	<b>Ընդամենը</b>	<b>0.18</b>	<b>%</b>		<b>6.28</b>
	<b>Վերանորոգման աշխատանքներ</b>				

132	N16 մետաղական շվելերների 50x50x5մմ մետաղական անկյունակների տեղադրում	տն	0.074	62.118	4.60
133	N16 շվելերի արժեքը	գմ	5.000	6.235	31.17
134	50x50x5մմ մետաղական անկյունակի արժեքը	գմ	0.800	1.507	1.21
135	Միաձույլ ե/բ բարձկային ծածկի սալի վերականգնում B-15 դասի բետոնից	մ <sup>3</sup>	0.290	61.305	17.78
136	Ամրանի արժեքը $\Phi 12$ A500c դասի	տն	0.033	333.893	11.02
137	Գոյություն ունեցող բազրիքների տեղադրում, նոր փայտե հղկված և լաքապատված բոնաձողերով	գմ	4.300	4.562	19.62
138	Ճաղաշարի 2 շերտ յուղաներկում	մ <sup>2</sup>	4.000	0.954	3.82
139	30մմ հաստությամբ ց/ավազե հարթեցնող շերտ	մ <sup>2</sup>	2.250	0.945	2.13
140	Կերամիկ սալերից հատակի պատրաստում	մ <sup>2</sup>	2.250	4.856	10.92
141	Պատշգամբի ց/ավազե սվաղ ամրանային ցանցի վրա	մ <sup>2</sup>	3.150	1.720	5.42
142	Ամրանային ցանցի տեղադրում $\Phi 4$ Bp-1	տն	0.043	452.962	19.48
143	Պատշգամբի ճակատային ներկում, մաձկապատումով	մ <sup>2</sup>	3.150	0.668	2.10
144	Ավտոամբարձիչի /BЫШКА/ շահագործում	ժամ	12.000	3.960	47.52

	<b>Ընդամենը</b>	<b>5.03</b>	<b>%</b>		<b>176.78</b>
	<b>9.Թոթավենցի փողոց Հ 11/1 շենք բն. 60</b>				
	<b>Քանդման աշխատանքներ</b>				
145	Խեցեսալե հատակի քանդում	մ <sup>2</sup>	2.250	0.345	0.78
146	Բետոնե հարթաշերտի քանդում 50մմ հաստությամբ /շրամեկուսիչ շերտով/	մ <sup>3</sup>	0.113	13.139	1.48
147	Մետաղական բազրիքների ապամոնտաժում /հետագա օգտագործումով/	զմ	4.300	0.371	1.59
148	Խոռոչների բացում	մ <sup>3</sup>	0.100	9.850	0.98
149	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	0.517	2.806	1.45
	<b>Ընդամենը</b>	<b>0.18</b>	<b>%</b>		<b>6.28</b>
	<b>Վերանորոգման աշխատանքներ</b>				
150	N16 մետաղական շվելերների 50x50x5մմ մետաղական անկյունակների տեղադրում	տն	0.074	62.118	4.60
